ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«27 դեկտեմբերի» 2016 թվականի № 11-Ն

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 01.01.2015-31.12.2015ԹԹ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգով, ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի N 105-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգով, ՀՀ ֆինանսների նախարարի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանում լրացում կատարելու մասին» 2015թ. ապրիլի 1-ի N 178-Ն հրամանի, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի «ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ներքին աուդիտի գործունեության կանոնակարգի և ներքին աուդիտի ռիսկերի որոշման չափորոշիչները հաստատելու մասին» 15.07.2015թ. N 330-Ա և «ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի 2016-2018թթ. ռազմավարական և 2016 թվականի տարեկան ծրագրերը հաստատելու մասին» 22.12.2015 թվականի N 571-Ա հրամանների պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Տիգրան Բայբուրտյանին, գլխավոր մասնագետ Արմեն Խաչատրյանին և գլխավոր մասնագետ Աննա Հակոբյանին սույն թվականի փետրվարի 1-ից մինչև փետրվարի 12-ը իրականացնել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության

աշխատակազմի 01.01.2015-31.12.2015թթ. ֆինանսական և գնումների համապատասխանության աուդիտ:

2.Աուդիտի արդյունքները ներկայացնել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարին՝ աուդիտի ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

3.Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Ե. ՉԱԽԱՐՅԱՆ